



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
 «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
 ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

14 սեպտեմբերի, 2021թ. 122-Ձ ք. Երևան

ՀՍ 110-2014 «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐ.
 ՏԻՊԵՐ և ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԵՐ. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ»
 ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետի
 ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՍ 110-2014 «Տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր. Տիպեր և հիմնական չափեր. Տեխնիկական պահանջներ» ազգային ստանդարտում փոփոխություններ կատարելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ.

Աշխատանքային խմբի ղեկավար՝

- Սամվել Ներսիսյան՝ ՀՀ ՃՈ հաշվառման-քննական և տրանսպորտային միջոցների տեխնիկական փորձաքննության բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ (համաձայնությամբ),

Անդամներ՝

- Սասուն Գրիգորյան՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ, (համաձայնությամբ)

- Գրիգոր Թադևոսյան՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության պարետային ծառայության զինավտոտեսչության պետ՝ փոխգնդապետ, (համաձայնությամբ)

- Լուսինե Խաչատրյան՝ Ստանդարտացման և ՉՄ տեսակի հաստատման բաժնի մասնագետ, աշխատանքային խմբի քարտուղար:

2. Աշխատանքային խմբի ղեկավար Ս. Ներսիսյանին առաջարկում եմ՝

- ՀՍ 110-2014 «Տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր. Տիպեր և հիմնական չափեր. Տեխնիկական պահանջներ» ստանդարտում կատարված համապատասխան փոփոխությունները ներկայացնել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ընդունման և գործարկման:

3. Ստանդարտացման և ՉՄ տեսակի հաստատման բաժնի պետ Թ. Բաբայանին՝

- ապահովել աշխատանքային խմբի կողմից կատարվող ստանդարտացման աշխատանքների համակարգումը և մեթոդական ղեկավարումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տնօրենի առաջին տեղակալ Մ. Բզնունուն:

Տնօրեն

Ժամանակավոր պաշտոնակատար՝

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ